Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թվականի
հունիսի 28-ի N 807 - Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԻ ՄՐՑԱՆԱԿԻ՝ ԱՐՁԱՆԻԿԻ ԷՍՔԻԶՆ ՈՒ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի մրցանակի արձանիկը խորհրդանշում է «Աստվածային համաչափության» կամ ոսկեհատման գաղափարը՝ ներդաշնակության և հավերժության հասկացությունների մարմնավորմամբ: Համամասնության նշված կանոններով կառուցված արձանիկի պարույրաձև եզրագիծը (բնական միջավայրի խորհրդանիշը)՝ դրան ներգծված բեկյալ գծով (ձեռակերտ միջավայրի խորհրդանիշը) արտացոլում են մարդ-բնություն փոխադարձ կապակցվածությունն ու միմյանցից կախվածությունը:

2. Արձանիկը նախատեսված է պատրաստել 13 մմ հաստություն ունեցող թափանցիկ բյուրեղապակուց, որի պարույրի վերևի եզրագծով և ոսկեգույն մետաղից պատրաստված բեկյալ գծի միջև մակերեսը 7.0 մմ հաստությամբ ուռուցիկ, որոշակի մշակվածք (ֆակտուրա) ունեցող ոսկեգույն բյուրեղապակուց է:

3. Արձանիկի միջնամասը նախատեսված է պատրաստել կաթնագույն 5.0 մմ հաստություն ունեցող բյուրեղապակուց, որը մասնահատված է պարույրի կառուցման գծերին համապատասխան: Կաթնագույն բյուրեղապակու եզրերը մասնահատումների մասում տաշված են 60^0-ով:

4. Արձանիկի չափերն են՝ երկարությունը՝ 210 մմ, բարձրությունը՝ 130 մմ, հաստությունը՝ 20 մմ:

5. Արձանիկի ներքևի աջ հատվածում գրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԻ ՄՐՑԱՆԱԿ»: «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը գրված են 0.4 չափի

«ArTarumianIshxan», իսկ «Լանդշաֆտի մրցանակ» բառերը՝ 0.8 չափի «ArTarumianIshxan» տառատեսակով: Տառերը ոսկեգույն մետաղից են:

6. Արձանիկի հակառակ երեսը հարթ է, թափանցիկ բյուրեղապակուց:

7. Պատվանդանն ունի 210 մմ երկարություն, 50 մմ լայնություն, 10 մմ բարձրություն: Նախատեսված է պատրաստել կաթնագույն բյուրեղապակուց՝ համաձայն NN 1, 2 և 3 ձևերի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ



Ձև N 1
Արծանիկի էսքիզ

Ձև N 2
Արծանիկի էսքիզ

Ձև N 3

Արձանիկի էսքիզ

Լանդշաֆտի մրցանակի արձանիկի տեսքը դիմացից



Տեսքը կողքից



Տեսքը վերևից



MAR-807.1